

չը տուեց, նախ որ ազգերի համերաշխութեան և եղբայրութեան գաղափարը այդ տեսակ ճնշին միջնադէպերի հետ կապել, կընշանակէ նսեմացնել նրան, երկրորդ, որ մի խումբ իրաւասունների անգիտակցաբար գործած սխալը չի կարող վերաբերուել Թիֆլիսի քաղաքային խորհրդարանի ամբողջ կազմին:

Մենք միանգամայն սառն և անտարբեր կը վերաբերուէինք, եթէ մեր իրաւասունների երեք ընտրելիներն էլ լինէին ազգով վրացի կամ ռուս և կամ թուրք: Քաղաքային խորհրդարանը քաղաքային շահերի պաշտպանն է և ոչ այս կամ այն ազգութեան ներկայացուցիչ: Այսօր հայեր, վաղը վրացիներ, միւս օրը թուրքեր—միևնոյնն է, թող միայն լինեն ազնիւ և խելացի մարդիկ մեր քաղաքի ներկայացուցիչները: Բաւական է, վերջապէս, ինչքան մը ջիւղներու դէմ հրացաններ արձակելով ցոյց տուեցինք մեր քաջութիւնը...

Անցեալ անգամ մենք հաղորդել էինք, որ վեհ. կաթուղիկոսի կողմից առանձին պատգամաւորութիւն է ուղարկուած Պ. Բուրգ չայ եկեղեցական կալուածների խնդրի համար:

Այժմ կարող ենք հաղորդել մեր ընթերցողներին, որ Պ. Բուրգից բարեյաջող տեղեկութիւններ են ստացուած թէ պատգամաւորութիւնից, թէ իշխ. Աբամելիք Լազարեանից և թէ մասնաւոր տեղեկութիւններով:

Կալուածների գրաւման մասին եղած յուլիսի 12-ի բարձրագոյն հրամանը պէտք է վերաքննուի, հայ դպրոցների բացման գործը կարգադրուում է, աքսորուած հայ եկեղեցականները շուտով յետ են դառնալու:

Պատգամաւորութիւնը, ներկայանալով Կովկասի նոր փոխարքայ կոմս Վօրօնցով-Պաշկովին, լսել է նորանից յիշեալ ուրախալի լուրերը և արդէն մեկնել է Պ. Բուրգից:

Օրաթերթերի այս կատարեալ սովի ժամանակ երիտասարդ գրագէտ պ. Գէորգ Մելիք-Կարազեօզեանը իրաւունք է ստացել հրատարակելու հայերէն մի օրագիր «Վոլկասեան Բանբեր» վերնագրով: Պարոնը այդ լրագիրը հրատարակելու է կից ռուսերէն «Кавказский Вѣстникъ» ամսագրին, որ պ. Վ. Ղորղանեանից անցել է իրեն: Լրագիրը կըսկսուի հրատարակուել սեպտեմբերից—չը գիտենք ինչո՞ւ այդպէս ուշ: Յանկանուում ենք մեր նոր եղբայրակցին կատարեալ յաջողութիւն:

Նմբազրութիւնս հեռագրով լիազօրութիւն տուեց իւր աշխատակից պ. Ստեփան Գաբրիէլեանին մասնակցել Պետերբուրգում ռուսական, մամուլի աշխատակիցներէ համաժողովին:

Կիւրակի, ամսոյս 3-ին Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում Հայոց նախկին հրատարակչական ընկերութեան նախագահի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ մի խումբ գրագէտների ժողով, խորհրդակցելու թէ ինչպէս կարելի է վերաբանալ այդ ընկերութիւնը առաւել լայն հիմունքների վերայ և ժամանակիս համապատասխան ծրագրով: Ժողովը միաձայն ընդունեց հրատարակչական ընկերութեան կարևորութիւնը և նշանակելով մի մասնաժողով՝ յանձնեց նորան կազմել մի նոր կանոնադրութիւն, ի նկատի ունենալով թէ հինը և թէ ներկայ ժամանակի պահանջները և Զատկից յետոյ ներկայացնել ժողովի քննութեան, որից յետոյ կառաջարկուի ի հաստատութիւն ուր որ հարկն է:

Քանի որ ժողովի նախաձեռնողը նախկին հրատարակչական ընկերութեան վարչութիւնն էր, մենք սպասում էինք, որ այդ վարչութիւնը նախ քան ընկերութեան վերաբացման խնդիր առաջարկելը, պարտք կհամարէր ներկայացնել ժողովին ընկերութեան վերջնական հաշիւը, որ ընկերութեան փակման ժամանակ զլացել էր նա տալ անդամներին և մինչև այսօր մութ մնաց այն խնդիրը, թէ իրօք այնքան գոյք յանձնուեցաւ Երեւանի Հայ թեմական դպրոցին, որքան որ ըստ հարշուի հասնելու էր, թէ աւելի կամ պակաս: Մենք դարձեալ կսպասենք:

Մեծ. տ. Եղիսաբէդ Յարութիւնեանը ի յիշատակ իւր հանգ. դստեր օր. Մարիամ Յարութիւնեանի ուղարկել է խմբագրութեանս 10 ռուբլի, որից հինգ ռ. Բագուի արկածեալների և հինգ ռ. Զխարի հրկիզելոց օգտին: Նմբազրութիւնս առաջին 5 ռ. ուղարկեց Թիֆլիսի պ. Քաղաքագլխին և վերջինը թեմիս ս. Առաջնորդին:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մըանից մի տարի առաջ մեր քաղաքում մի օրիորդի նախաձեռնութեամբ կազմակերպուել էր վերին աստիճանի համակրելի և հանրօգուտ մի գործ, — ժողովրդի աղքատ և հասարակ դասի համար պարբերաբար տալիս էր հանրամատչելի և